ՀՀ ԳԱԱ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ անվ. ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՍՏՂԱԴԻՏԱՐԱՆԻ
2.6 մ ԴԻՏԱԿԻ ԴԻՏՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 2.6 մ դիտակում դիտողական ժամանակ ստանալու համար հարկավոր է ներկայացնել պատշաճ կերպով լրացված հայտը;
- Հայտը ճիշտ ներկայացնելու համար աստղադիտարանի կայքում պետք է ներկայացված լինի ինֆորմացիա դիտակի ներկա դրությամբ բոլոր տեխնիկական հնարավորությունների մասին;
- Դիտողական ժամանակի բաշխումից հետո դիտումների բաշխումը տեղադրվում է կայքում հոկտեմբերի 15-20 (I կիսամյակ) և ապրիլի 15-20 (II կիսամյակ) ժամկետներում;
- Մերժման դեպքում հանձնաժողովի կողմից պատվիրողին ուղարկվում է բացատրություն, թե ինչ պատճառով է մերժվել հայտը;
- Դիտումներից առաջ դիտակը պետք է բերվի դիտումների համար պատրաստ վիճակի համաձայն այն պահանջների, որոնք նշված են եղել դիտողական ծրագրում;
- Դիտողական ծրագրի համահեղինակներից գոնե մեկը պարտադիր ներկա պետք է լինի դիտումների ընթացքում և ունենա նախապես պատշաճ ձևով պատրաստված նույնացման քարտեզներ;
- Դիտումների ընթացքում պատվիրողը պետք է ակտիվ մասնակցի դիտողական աշխատանքներին;
- Դիտումների արդյունավետությունը բարձրացնելու համար դիտակի գմբեթը պետք է բացվի մթնելուց 2 ժամ առաջ;

- Վատ եղանակի դեպքում պատվիրողն է որոշում գնալ դիտակ, թե ոչ, և երբ ավարտել դիտումները, բայց գմբեթը բացելու և փակելու մասին որոշումը կայացնում է պատասխանատու դիտողը;
- Դիտակի կամ ընդունիչ սարքավորման անսարքության դեպքում դիտումները դադարեցվում են և տեղեկացվում է աստղադիտարանի վարչակազմին:
- Եթե դիտումները չեն իրականացվել դիտակի տեխնիկական անսարքության պատճառով, ապա պատվիրողին ցանկության դեպքում հատկացվում է լրացուցիչ ժամանակ;
- Դիտումները ավարտելուց 1 շաբաթվա ընթացքում պատվիրողը պետք է լրացնի հարցաշար դիտողական աշխատանքների ընթացքի մասին (Results Form), որը տեղադրված է կայքում;
- Ստացված տվյալները պատվիրողը կարող է ստանալ անմիջապես դիտումների ավարտից հետո;
- Դիտումների ավարտից հետո պատվիրողի հեղինակային իրավունքները պահպանվում են 1 տարի: